ՌՈՒՍԱՍՏԱՆ ՊԱՏՐԱՍՏ Է ՕԳՆԵԼՈՒ ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԻՆ

Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւին ուղարկուած պատգամով, Ռուսմաստանի Դաշնութեան նախագահ Պորիս Ելցինը յայտնել է, որ Մոսկուան պատրաստ է նպաստել Հայաստան-Ադրբեջան հակամարտութեան լուծմանը:

Ելցինը իր պատգամում յայտնել է նաեւ, որ պատրաստ է հանդիպում կազմակերպել Հ.Հ. նախագահ Ռոբերտ Քոչարեանի եւ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի միջեւ: Նա շեշտել է մնայուն խաղաղութեան եւ կայունութեան կարեւորութիւնը Կովկասում, որը համընկնում է Ռուսաստանի շահերին եւ նրա նախապատուութիւններից է: Ելցինը շեշտել է նաեւ, որ թիկունք է կանգնում բանակցութիւնների վերսկսմանը՝ Ե.Ա.Հ.Կ.ի Մինսկի Խմբի շրջանակներում: Միաժամանակ նա կարեւորել է Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների միջեւ երկխօսութիւնը եւ կոչ է արել այն մնայուն երեւոյթի վերածել:

Ադրբեջանական «Թուրան» գործակալութեան համաձայն, Ելցինը իր պատգամում յայտնել է նաեւ, թէ Մոսկուան չի պնդում, որ Բաքուն ընդունի «Միացեալ պետութեան» գաղափարը՝ Ղարաբաղեան Հարցի լուծման կապակցութեամբ: Նոյն աղբիւրի համաձայն, Բաքուն դրական է գնահատել Ելցինի այս մօտեցումը:

«Իքար-Թասս»

Հայաստան